

անդգուշութեամբ կլարուի. իսկ վրէժխնդրութեամբ միշտ կամաւ, միշտ չարութեամբ կկատարէ իւր կատաղութիւնը: Ո՛ւր կմնայ այսպիսի վրէժխնդրութեան արդարութիւնը:

Թէ որ ընդհանրապէս սր եւ իցէ յանցանքի կամ պակասութեան համար վրէժխնդրութիւն ընելը վայրենութիւն ու անիրաւութիւն է, հապա ինչ ըսեմք անոնց որ մեծ նախանձայուղութեամբ վրէժխնդիր կլինին իրենց պատուոյն: «Այս ինչ մարդը իմ պատուոյս դպաւ» ըսելով՝ կատաղութիւնը ձեռք կառնուն, ու ամէն տեսակ ցածութիւն ու անպատիւ մարդու միայն վայելելու չարութիւն կմրտածեն ու իգործ կգնեն: Կատաղութիւնը այնպէս կկուրցնէ զիրենք որ չեն կրնար մտածել թէ մարդուս իրեն պատիւը պահպանելը իւր ձեռքն է, եւ ոչ ոք կարող է ուրիշի պատիւը վար ձգել: Պատուաւոր մարդը ցած մարդէն ասով կտարբերի գլխաւորապէս որ առաջինը իւր աշխատանքովը հարստացած մարդու կնամանի, եւ երկրորդը՝ իւր հարստութիւնը անկարգութեամբ վատնողի, որ կարծէ թէ հարստին վրայ չարախօսութիւն ընելով՝ կարող է զնա իրեն պէս աղքատութեան մէջ ձգել:

Ամէն մարդ ամէն ժամանակ պարտական է հաւատալու թէ երկինքը Աստուած մը կայ՝

վրէժխնդիր արդարութեան. եւս առաւել պիտի հաւատայ այս ճշմարտութեան այն մարդն որ կարծէ թէ իւր արդարութիւնը կամ իւր պատիւը վրէժխնդրութիւն կպահանջէ: Վասն զի մեզի չարիք հասցընել ուղղին միտքը՝ Աստուծոյ միայն ինչպէս որ պէտք է յայտնի է. ուստի խելքը այն է որ Աստուծոյ թողումք մեր անմեղութեան կամ արդարութեան վրէժը առնելու հոգը:

Ձեռնն փիլիսոփային ըսեր է ատենով մէկը թէ «Ես քեզի կցուցընեմ որ զիս թշնամի ունենալդ սուղ պիտի նստի քեզի»: Պատասխան տուեր է փիլիսոփան. «Ես ալ քեզի այնքան աղէկութիւն ընեմ որ զիս բարեկամ ունենալդ ցանկալի լինի քեզի»: Թէ որ հեթանոս փիլիսոփայք բնական խելքին լուսովը կրցան այսպիսի բարոյականի տէր լինելը ինչո՞ւ համար ծանր պիտի դար քրիստոնէից Աւետարանին հրամանը, որ վրէժխնդրութեան տեղ կապարէ բարիք ընել թշնամեաց, թէ որ յիրաւի ճշմարիտ քրիստոնեայք են, եւ Քրիստոսի հետեւող: Եթէ այժմու կարծեցեալ լուսաւորութիւնը հակառակ կենէ Աւետարանի լուսոյն, ըսել է թէ լոյս չէ, խաւար է. եւ այս խաւարը լուսոյ տեղ զնողը վայր արժանի է, եւ ոչ թէ պատուոյ եւ դուլեստի:

Ա Ռ Ա Կ Ք Գ Ե Ր Մ Ա Ն Ա Յ Ի Ո Յ.

Թէ ծու կուզես հաւերէ,
Կըկըռոցին համբերէ՛:

Խելացի երիկ,
Համբերող կընիկ,
Տունն է երջանիկ:

Խելին կըզակն ածիլողը
Շատ իմաստուն պէտք է լինի:

Սուղ ոսկին չու՛զեր որ իրեն դպչին:
Լաւ է հաւկըթին կէսը՝
Քան թէ ամբողջ կըճեպը:

Ա Ռ Ա Կ Ք Ա Ն Գ Ղ Ի Ա Յ Ի Ո Յ.

Եթէ կուզես տեսնել երազ ոսկէզօծ,
Քունէդ առաջ խիղճըդ մաքրէ չար գործոց:
Լաւ է լինիս Թըշնամոյդ աղէկութեանցը գովող,
Քան գէշութեանց մըտերմիդ շողոքորթիլու գովող:

Կըրից կրակովը տաքցիր,
Բայց տես՝ անով մի՛ այրիր:

Կուզե՛ս չըմոռնալ գիտցածըդ,
Դու պատմիր այլոց սովածըդ:

Գըրքին իփոխ առնուածը
Շուտ կարդացուի քան գընուածը:

Շնորհալի կերպ ու կերպարանք ով ունի,
Ձեռքը ազդու յանձնարար նամակ ունի:

Բարեկամք եւ գիրք,
Սակաւք՝ այլ ընտիրք:

Առանց ուժի խօսք պոռոտ,
Ատըրճանակ անվառօդ:

Մըտրա՛կ լինին աղէկութեան՝ աստիճանք,
Ոչ թէ անմիտ հըպարտութեան ասպատանգ:

Իշու ծնօտէն յաղթընեցան Փըղըշտացիք.
Խելին խօսքէն չէ՛ն յաղթընի մերթ խելացիք:

Թէ ըստակ ուզես ազա՛հ հարուստէն,
Մուրացած լինիս քան զքեզ աղքատէն:

Ճշմարտութիւնն ուստի՛ եւ գայ,
Միշտ Աստուծոյ կողմէն կուգայ: